

**«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանի  
2023թ. սեպտեմբերի 24-ից սեպտեմբերի 27-ը ք. Վիեննա (Ավստրիա)  
կատարած գործուղման հաշվետվություն**

**Գործուղման նպատակը**

ՀՀ պատվիրակության կազմում մասնակցությունը ԱԷՄԳ Գլխավոր Համաժողովի 67-րդ նստաշրջանի աշխատանքներին:

**Գործուղման նկարագիրը և արդյունքները**

Առաջին օրը՝ սեպտեմբերի 24-ին, ՀՀ պատվիրակությունը՝ ի դեմս «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանի, «Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ գլխավոր տնօրեն Վ. Պետրոսյանի և ՀՀ ՄԱԿ կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Գրիգորյանի, կատարել է գրանցման և լիազորությունների հաստատման պարտադիր ընթացակարգերը:

Երկրորդ օրը՝ սեպտեմբերի 25-ին, սկսվել են խորհրդաժողովի լիազումար նիստի աշխատանքները: Մասնավորապես՝

Օրակարգի 1-ին կետով («Պաշտոնատար անձանց ընտրություն և Գլխավոր կոմիտեի նշանակում») խորհրդաժողովը վաթսույնյոթերորդ հերթական նստաշրջանում ԱԷՄԳ-ում Թաիլանդի դեսպան և մշտական ներկայացուցիչ տիկին Վիլավան Մանգկլատանակուլին ընտրել է գլխավոր համաժողովի նախագահ, իսկ ԱԷՄԳ-ում Հունգարիայի մշտական ներկայացուցչության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Վիլմոշ Չերվենին՝ որպես Գլխավոր կոմիտեի լրիվ կազմի նախագահ:

Օրակարգի 6-րդ կետով խորհրդաժողովը հաստատել է պարոն Ռաֆայել Մարիանո Գրոսսիի նշանակումը ԱԷՄԳ-ի գլխավոր տնօրենի պաշտոնում չորս տարի ժամկետով՝ 2023 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 2-ը:

Օրակարգի 7-րդ կետով («Ընդհանուր քննարկում և 2022թ.-ի տարեկան զեկույց») լսվել են համաժողովի մասնակից 11 երկրների ելույթներն ու հայտարարությունները:

Կայացել է Գլխավոր կոմիտեի առաջին նիստը, որտեղ սահմանվել է ընթացիկ նստաշրջանի փակման ամսաթիվը՝ 2023 թվականի սեպտեմբերի 29-ը, և գլխավոր համաժողովի հաջորդ նստաշրջանի մեկնարկի ամսաթիվը՝ 2024 թվականի սեպտեմբերի 16-ը:

Հայկական պատվիրակությունը, իր իսկ ծրագրի համաձայն, աշխատանքային հանդիպում է ունեցել Հորդանանի Թագավորության պատվիրակության հետ: Այդ երկրում ևս, ինչպես և Հայաստանում, բնական նշանակալի էներգառեսուրսների բացակայության պատճառով ատոմային տեխնոլոգիաները հանդիսանում են էներգետիկ անկախության և անվտանգության միակ երաշխավորը: Որպես ատոմային էներգետիկայի կայացման սկզբնական փուլում գտնվող երկիր՝ Հորդանանը շատ օգտակար է համարում Հայաստանի փորձն այս ոլորտում, մասնավորապես հիդրոէլեկտրաբանական այնպիսի խնդիրների լուծման գործում, ինչպես օրինակ՝ նոր ատոմակայանը հովացնող ջրով ապահովելը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել տարբեր մակարդակներով, այդ թվում՝ աշխատանքային այցերի, շարունակել այս թեմայով շփումները:

Համաժողովի աշխատանքներին հայկական պատվիրակության մասնակցության շրջանակներում կայացել է հանդիպում ԱԷՄԳ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, «Տեխնիկական համագործակցության» դեպարտամենտի ղեկավար պարոն Հուա Լյուի հետ: Հանդիպման հիմնական թեման ռադիոակտիվ թափոնների անվտանգ



կառավարման ապահովման գործում Հայկական ԱԷԿ-ին տեխնիկական համագործակցության, փորձագիտական, գիտատեխնիկական և տեղեկատվական-խորհրդատվական աջակցության ակտիվացման հեռանկարներն էին. հնարավոր է՝ օգտագործելով ԱԷԿ-ի ծրագրերի ներուժը (օրինակ RER-91/58 «Ճառագայթային անվտանգության ոլորտում կարգավորման ենթակառուցվածքի ամրապնդում» և RAS-90/96 «Ճառագայթային անվտանգության ենթակառուցվածքի ամրապնդում»):

Տեղի է ունեցել նաև հայկական պատվիրակության հերթական աշխատանքային հանդիպումը Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների («Միջազգային գործընկերության գլխավոր տնօրինության» աշխատակիցների) հետ, որը ղեկավարում էր ծրագրի ղեկավար պարոն Ինտե Ստոկմանը (Ynte Stockmann): Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀԱԷԿ-ի անվտանգության պատշաճ մակարդակի ապահովմանն ուղղված առավել բարդ, ծախսատար և երկարաժամկետ միջոցառումների իրականացմանն ուղիները: ՀԱԷԿ-ի առաջնահերթ կարիքների և Եվրահանձնաժողովի ընթացիկ հնարավորությունների վերլուծության արդյունքների վրա հիմնվելով՝ բավական իրատեսորեն կարելի է հույս դնել Եվրահանձնաժողովի կողմից գիտատեխնիկական, տեղեկատվական-խորհրդատվական և ֆինանսական աջակցության վրա հետևյալ խնդիրների իրականացման գործում:

1. «Անվտանգության համար կարևոր համակարգերի տարրերի՝ անկախ, այլընտրանքային վթարային հովացման համար ջրամատակարարման սարքավորումների ձեռքբերում»
2. «Օրական արտահոսքի 100%-ից ցածր մակարդակի վրա կոնտեյնմենտի հերմետիկությունը պահպանելու աշխատանքների ֆինանսավորում»
3. «Ռադիոակտիվ թափոնների երկարաժամկետ (մինչև 300 տարի) պահպանման համար երկաթբետոնե տարաների արտադրության տեխնոլոգիական համալիրի ձևավորման ֆինանսավորում»

Ի.Ստոկմանը խոստացավ հետևողական լինել և քննարկել վերոնշյալ երեք կետերի ֆինանսավորման հարցը վերադաս ղեկավարների հետ, միաժամանակ նշելով, որ ներկա պահին ֆինանսավորման միջոցների հիմնական մասը նպատակաուղղվում է Ուկրաինա:

Երրորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին, հայկական պատվիրակության աշխատանքները շարունակվել են խորհրդաժողովի առավոտյան (երրորդ) լիազումար նիստի մասնակցությամբ, որի ընթացքում լսվել են խորհրդաժողովի մասնակից 23 երկրների ելույթներն ու հայտարարությունները: Երեկոյան (չորրորդ) լիազումար նիստում զեկույցներով և հայտարարություններով հանդես են եկել համաժողովի մասնակից ևս 19 երկրի ներկայացուցիչներ:

Ադրբեջանական պատվիրակության ղեկավար, արտակարգ իրավիճակների փոխնախարար Թափդիգ Ամիրասլանովն իր ելույթում, փաստացի, անհիմն պնդումներ է ներկայացրել, որ Հայկական ԱԷԿ-ը ծայրահեղ վտանգ է ներկայացնում տարածաշրջանի մոտակա երկրների համար: Օգտվելով պատասխանի իրավունքից՝ ԱԷԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչն այդ ելույթը որակել է որպես սադրիչ, ոչ կոմպետենտ և իրականության հետ որևէ աղերս չունեցող: Հետևելով էներգաբլոկի շահագործման ընթացքում անվտանգության անվերապահ առաջնահերթության քաղաքականությանը և առավելագույն թափանցիկությանն այս հարցերում՝ ՀԱԷԿ-ում գրեթե առաջին օրվանից իրականացվում է անվտանգության մշտական բարձրացման հայեցակարգը, որի շնորհիվ կայանի անվտանգության ներկայիս մակարդակը լիովին համապատասխանում է ժամանակակից պահանջներին: Նա ընդգծել է, որ ՀԱԷԿ-ի անվտանգության մակարդակի



այս գնահատականը պարբերաբար հաստատվում է ԱԷՄԳ-ի, ՇԿՀԱ-ի և այլ միջազգային կազմակերպությունների առաքելությունների կողմից, այսինքն՝ Ադրբեջանի ներկայացուցչի հայտարարությունը կասկածի տակ է դնում միջազգային հեղինակավոր փորձագետների կոմպետենտությունն ու օբյեկտիվությունը:

Լիագումար նիստերի միջև և դրանց ավարտին հայկական պատվիրակությունը մասնակցել է մի շարք այլ խորհրդակցությունների, բանակցությունների ԱԷՄԳ-ի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանի համար հատկապես կարևոր ուղղություններով գիտատեխնիկական համագործակցության ինտենսիվացման հետ կապված հարցեր՝ ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի կրկնակի երկարաձգում և Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցում:

Հատկապես պետք է նշել «Երաշխավորված անվտանգության» դեպարտամենտի (Department of safeguards) մասնագետների հետ հանդիպումը: Այդ հանդիպման ընթացքում միջուկային վառելիքի ներկայանային տեղաշարժերի հետ կապված հարցերի քննարկման արդյունքում ձևավորվեցին առաջնահերթ միջոցառումները, մասնավորապես՝ առաջին կոնտուրի ջրի որակի լիարժեք համապատասխանեցնում նորմատիվային պահանջներին, Ռեակտորային արտադրամասի ապարատային բաժանմունք մտնող օդի խորը մաքրման ապահովում, աշխատած միջուկային վառելիքի պահման ավազանի «լողացող» ֆիլտրերով հագեցում և այլն:

Բավականին հեռանկարային են նաև ՀԱԷԿ-ի գործող էներգաբլոկի սարքավորումների և համակարգերի վերանորոգման, փոխարինման, արդիականացման հետ կապված հարցերում իրանական պատվիրակության համագործակցության առաջարկները: Իրանական գործընկերների հետ հանդիպման ընթացքում, վերջիններս ներկայացրել են, որ համեմատաբար կարճ ժամանակահատվածում իրենք ստեղծել են բավականին կատարյալ միջուկային ենթակառուցվածք, որն ապահովում է շահագործման ընթացքում ծագող նախագծանախահաշվային, հաշվարկային և վերլուծական աշխատանքների իրականացման հետ կապված հարցերի ինքնուրույն լուծում, ինչպես նաև կայանի վերանորոգման կարիքների համար սարքավորումների և պահեստամասերի առանձին միավորների արտադրության հնարավորություն: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ, մասնավորապես «Հայատոմ» ԳՀԻ հետ, ինչպես նաև ատոմակայանի անվտանգ շահագործման համար անհրաժեշտ պահեստամասերի և ծառայությունների ձեռք բերման շուրջ:

Երկու կողմերը ընդգծել են որ հարևան Իրանի հետ անմիջական ցամաքային սահմանի առկայությունը վերացնում է լոգիստիկայի խնդիրները, թույլ է տալիս հնարավորինս արագ իրականացնել համագործակցությունը, ինչը շոշափելի առավելություն է ստեղծում մրցակցային առաջարկների նկատմամբ և հիմնավորում է այդ երկրի համապատասխան ձեռնարկությունների հետ գործարար հարաբերությունների զարգացման նպատակահարմարությունը:

Չորրորդ օրը՝ սեպտեմբերի 27-ին, կազմակերպվել է վերադարձը Հայաստան:


## **Ծանուցում**

Սեպտեմբերի 28-ին՝ գլխավոր կոնֆերանսի 67-րդ նստաշրջանի ընթացքում, Հայաստանի Հանրապետությունն ընտրվել է ԱԷՄԳ-ի Կառավարիչների խորհրդի անդամ 2023-2025 թթ. ժամանակահատվածի համար: Կառավարիչների խորհուրդը գլխավոր

համաժողովի հետ միասին ԱԷՄԳ-ի քաղաքականության մշակման համար պատասխանատու երկու մարմիններն են: Կառավարիչների խորհրդի անդամ են հանդիսանում ԱԷՄԳ-ի 177 անդամ-պետություններից 35-ը:

Այս փաստը հաստատում է Հայաստանի բավական բարձր հեղինակությունը "միջուկային ակումբում":

**Գլխավոր տնօրեն**



**Է. Մարտիրոսյան**